Արձանագրություն

Մայիսյան համայնքի ղեկավարի 2019 թվականի 1 տարվա կատարված աշխատանքների հաշվետվությունից

Նախագահությամբ՝ Վ.Հարությունյանի

Քարտուղարությամբ՝ Մ. Աբգարյանի

Հաշվետու ժողովին մասնակցում էին համայնքի թվով 48 բնակիչներ և մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ պարոն՝ Ա. Այվազյանը:

Օրակարգում

Մայիսյան համայնքի ղեկավարի 2019 թվականի 1 տարում կատարված աշխատանքների մասին

Զեկ.՝ համայնքի ղեկավար՝Ե. Մովսիսյան

Հարգելի համագյուղացիներ, հարգելի պարոն Այվազյան, Մայիսյան համայնքում 2019թ. 1 տարում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ բյուջեի եկամուտների հաշվին:

Համայնքում սանիտարահիգիենիկ մաքրությունը միշտ եղել է առաջնակարգ խնդիր, որի համար Լևոն Օհանյանի հետ կնքվել է համայնքում աղբաթափություն կատարելու համար պայմանագիր և կատարված աշխատանքների համար փոխանցվել է 1.500.000 դրամ:

Մայիսյան համայնքում գործող նախադպրոցական կրթական համակարգին որպես դրամաշնորհ փոխանցվել է 800.000 դրամ:

Համայնքը ակտիվ մասնակցություն է ունեցել մարտի 23-ի և հունիսի 8-ի համապետական շաբաթօրյակներին մաքրելով մշակույթի տան, համայնքապետարանի դպրոցի բակը և համայնք մտնող գլխավոր ճանապարհի երկու կողմերը

Համայնքում առկա 2 հակակարկտակային կայանի լիցքավորման համար փոխանցվել է 100.000 դրամ:

Մայիսյան համայնքից 2 կմ հեռավորության վրա է գտնվում Սարգիսի անվան թաղամասը, որտեղից 45 երեխաներ ձյան և անձրևի ժամանակ ոտքով հաճախում են Մայիսյանի միջնակարգ դպրոց, տակայն համայնքապետարանը հնարավորություն է

ստեղծել երեխաներին օգտվելու երթուղային տրանսպորտից, ինչպես նաև դպրոցական երեխաների բուժզննման համար տրամադրել տրանսպորտային միջոց, որի համար բյուջեից փոխանցվել է 800.000 դրամ:

Համայնքի միջոցների հաշվին ձեռք են բերվել նոր խողովակներ և հիմնովին վերանորոգվել է տնամերձ հողամասերի ոռոգման ցանցը, որի համար ծախսվել է 950.000 դրամ:

Արմավիրի մարզի մարզային փրկարարական ծառայությանը ցուցաբերվել է աջակցություն՝ 100.000 դրամ

Մայիսյան համայնքում 2019 թվականին սուբվենցիոն ծրագրով իրականացվել է համայնքի գլխավոր թիվ 1 փողոցի երթևեկելի մասի ծածկույթի բարեկարգում և ասֆալտապատում, որի համար ՀՀ կառավարությունը հատկացրել է 3.471.9 հազ դրամ իսկ համայնքը 8.097.0 հազ. դրամ : Համայնքում կատարվել է 1620 քմ հիմնանորոգման և 550 քմ փոսալցման աշխատանքներ:

Համայնքում կատարվել է նախկինում հորատված խորքային հորի վերանորոգման աշխատանքներ և այն պատրաստ է շահագործման 2020թ:

Համայնքից դեպի Սարգիսի անվան թաղամաս գնացող 2 կմ ճանապարհահատվածում կատարվել են փոսալցման և հարթեցման աշխատանքներ, որի համար փոխանցվել է 950.0 հազ. դրամ

Համայնքում մարտի 8-ին և հոկտեմբերի 5-ին /ուսուցչի օր/ կազմակերպվել են միջոցառումներ:

2014 թվականի օգոստոսի 2-ի դիվերսիայի ժամանակ զոհված զինծառայող Սարգիս Մովսիսյանի ծննդյան օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում:

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում են գտնվում Արցախյան պատերազմում անհայտ կորած Մայիսյանցիների ընտանիքները, ինչպես նաև համայնքի սոցիալապես անապահով բնակիչները որոնց տրվել է դրամական օգնություն:

Համայնքում ամանորի կապակցությամբ անցակացվել է միջոցառում , շուրջ 200 երեխայի տրվել է ամանորյա նվերներ

Համայնքի 1 տարվա բյուջեի եկամուտները կազմում են՝

ա) Հողի հարկի գանձումներ՝ -104. 0%

բ) Գույքահարկի գանձումները՝ -115.0%

գ/ Համայնքի սեփական եկամուտներ՝ -106.6%

Ավարտելով զեկույցը՝ Ե. Մովսիսյանը համայնքի բնակչությանը ցանկացավ բերքառատ տարի և անկորուստ բերքահավաք, որից և կախված է բնակչության բարեկեցիկ կյանքը:

Ելույթ ունեցան Մ.Գինոսյանը, Հ. Հակոբյանը , Ա. Սիմոնյանը , Հ. Ասատարյանը Մ.Բարսեղյանը , որոնք համայնքի ղեկավարի 2019 թվականի 1-տարվա կատարված աշխատանքները գնահատեցին լավ: Ելույթ ունենալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնության պահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյանը ցանկացավ հողի հարկի և գույքահարկի գանձումները ժամանակին հավաքագրելու և հետագա աշխատանքները կատարելու և 1 տարվա կատարված աշխատանքները գնահատեց լավ:

Համայնքի հիմնախնդիրները

1. 30 հա տնամերձ հողամասերի համար մեկ խորքային հորի հորատում
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
3. Մշակույթի տան վերանորոգում
4. Ճանապարհների ասֆալտապատում

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Քարտուղար՝ Մ. Աբգարյան